ՊԱՅՄԱՆԱԳԻՐ No 1(22)

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ <<ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան 19 դեկտեմբեր **2021թ.**

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Հ. Բատիկյանի (այսուհետ՝ Պետական մարմին), որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Ճանապարհային դեպարտամենտ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ի դեմս գլխավոր տնօրեն Ս. Մաչյանի (այսուհետ՝ Կազմակերպություն), որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշումը, 2021 թվականի «Ճանապարհային ցանցի բարելավում» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) «Ավտոմոբիլային ճանապարհների ցանցի հսկողություն՝ ուսումնասիրություններ և փորձաքննություններ» միջոցառման իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն Պայմանագրով Պետական մարմինը պարտավորվում է Ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշմամբ նախատեսված 218,088,900 (Երկու հարյուր տասնութ միլիոն ութսունութ հազար ինը հարյուր) դրամ գումար՝ այդ թվում ԱԱՀ՝ 36,348,150 (Երեսունվեց միլիոն երեք հարյուր քառասունութ հազար հարյուր հիսուն) դրամ, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ և սույն Պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ Կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ Միջոցառումներ) ներկայացված են սույն Պայմանագրի թիվ 1 հավելվածում:

1.3. Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի №2215-Ն որոշմամբ սահմանված 9.1 հավելվածի 9.1.8 աղյուսակի «1049» ծրագրի «11004» միջոցառման արդյունքի չափորոշիչները ներկայացված են սույն Պայմանագրի թիվ 2 հավելվածում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել սույն Պայմանագրի 5.1-ին կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված առանձին Միջոցառումների իրականացման ժամկետները (Միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. սույն Պայմանագիրն օրենքով կամ սույն Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1 իրականացված Միջոցառման արդյունքը Պետական մարմնի կողմից ընդունելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը,

2.2.2. Պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը.

2.3.2. կատարել Ծրագրի (առանձին Միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել Ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. գործունեության արդյունքների վերաբերյալ ներկայացված եռամսյակային և տարեկան հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված Միջոցառումը համապատասխանում է

Ծրագրի և սույն Պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, Պետական մարմինը հաշվետվությունն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետում դրա մասին գրավոր ծանուցում է Կազմակերպությանը:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել Ծրագրի շրջանակներում Պետական մարմնի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և (կամ) սույն Պայմանագրով սահմանված նպատակներով և չափաքանակներով.

2.4.3. կատարել Պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. սույն Պայմանագրով սահմանված կարգով Պետական մարմին ներկայացնել Միջոցառումների իրականացման մասին եռամսյա հաշվետվություն՝ մինչև եռամսյակի վերջին ամսվա հաջորդող ամսվա 20-ը, իսկ Ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ տարեկան հաշվետվություն՝ տարվա ավարտից հետո 30 օրվա ընթացքում.

2.4.5. սույն Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6. Պետական մարմնի կողմից առանձին Միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ Պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.7. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

3. Մոնիթորինգը

3.1. Պետական մարմինը Ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է Պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է Ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Կազմակերպության կողմից Միջոցառումները իրականացվում են հաշվետու տարվա ընթացքում, իսկ վճարումներն իրականացվում են ամսեկան՝ կանխավճարային ձևով, յուրաքանչյուր ամսվա 20-ից հետո, բայց ոչ ավելի քան սույն Պայմանագրի անբաժանելի մաս կազմող թիվ 2 հավելվածով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված վճարման չափից:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Սույն պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում կազմակերպությունը պարտավորվում է պետական մարմնին փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված Միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Պետական մարմինը սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից, տարածվում է 2021 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, Պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի

ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս Կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Միջոցառումները (Հավելված N 1) և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի №2215-Ն որոշմամբ սահմանված 9.1 հավելվածի 9.1.8 աղյուսակի «1049» ծրագրի «11004» միջոցառման արդյունքի չափորոշիչները (Հավելված N 2) հանդիսանում են սույն Պայմանագրի անբաժանելի մասը:

8.2. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

8.3. Պայմանագիրը կնքվում է հայերեն լեզվով, 2 /երկու/ օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ:

8.4. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Հ. ԲԱՏԻԿՅԱՆ

Ս. ՄԱՀՅԱՆ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
h/h 900011001121
ՀՎՀՀ 02815457

«Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ
ք. Երևան, Նալբանդյան փ. 28
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
h/h 900018007675
ՀՎՀՀ 02702598

Հավելված N1
2021 թ. _____ ____ -ին
կնքված N _____ պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

NN ը/կ	Իրականացվելիք միջոցառման					
	Անվանումը	Համառոտ բովանդակությունը	Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	Վերջնա-ժամկետը	Պահանջվող գումարը (դրամ)
1	ՀՀ պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ցանցի զարգացման ու դրանց նպատակային օգտագործման, վերականգնման, պահպանման և հեռանկարային զարգացման ծրագրերի իրականացման նպատակով պետական քաղաքականության մշակման աշխատանքներին օժանդակություն, այդ թվում՝					**91,315,536**
1.1	Ավտոմոբիլային ճանապարհների առանձին հատվածների ծածկի վիճակի ուսումնասիրություն (շուրջ 1600կմ)	Ավտոմոբիլային ճանապարհների ծածկի վիճակի դիտարկում	Ավտոմոբիլային ճանապարհների ծածկի տեխնիկական տվյալների հավաքագրում	Վերականգնման ծրագրի մշակման անհրաժեշտ մուտքային տվյալների ստացում	30.12.2021	23,942,911
1.2	Երթևեկության ինտենսիվության տվյալների հավագրում (99 հաշվեկետ,122 այցելություն)	Տրանսպորտային հոսքերի ուսումնասիորություն	Երթևեկության ինտենսիվության չափում	Վերականգնման ծրագրի մշակման անհրաժեշտ մուտքային տվյալների ստացում	30.12.2021	14,166,027

1.3	Աջակցություն պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների վերականգնման ծրագրերի մշակմանը	Ա/ճանապարհների վերականգնման ծրագրերի մշակման համար անհրաժեշտ տվյալների հավաքագրում և ամփոփում	Ուսումնասիրությունների և հետազոտությունների վերլուծություն, տնտեսագիտական վերլուծական ծրագրերի կիրառում	Վերականգնմանն առաջարկվող ճանապարհների ցանկի ներկայացում	30.12.2021	27,354,027
1.4	Ավտոմոբիլային ճանապարհների գույքագրում (շուրջ 600կմ)	Ա/ճանապարհների գույքագրում, շտեմարանի լրացում և վարում	Ա/ճանապարհների տարրերի չափագրում և լուսանկարահանում	Ա/ճանապարհների կառավարման արդյունավետության բարձրացում	30.12.2021	14,444,114
1.5	Ճանապարհային երթևեկության անվտանգության բարելավում	Ճանապարհային երթևեկության կազմակերպման ուսումնասիրություն	Ճանապարհների ներկա երթևեկության վիճակի վերաբերյալ տվյալների հավաքագրում և վերլուծություն	Ճանապարհային երթևեկության անվտանգության բարելավման ուղղված առաջարկությունների ներկայացում	30.12.2021	11,408,457
2	ՀՀ պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների վիճակի պարբերական ուսումնասիրությունների իրականացում, կապալառու կազմակերպությունների աշխատանքի դիտարկումներ և գնահատում, վերականգնման աշխատանքների մշտադիտարկում, հսկողություն և գնահատում, այդ թվում՝					**96,805,364**
2.1	Կատարված աշխատանքների ընդունման նպատակով միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ	Միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային	Պարբերական դաշտային այցելություններ	Միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների պատշաճ սպասարկման	31.12.2021	37,143,772

	ամառային (2905.2կմ) և ընթացիկ ձմեռային (3286.05կմ) պահպանման աշխատանքների պարբերական դիտարկում և հսկողություն	պահպանման աշխատանքների ուսումնասիրություն		ապահովում		
	Ընդհանուր օգտագործման միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների վիճակի գնահատում՝ հաջորդ տարվա պահպանման և սպասարկման պլանի կազմման նպատակով	Միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների վիճակի գնահատում	Միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների վիճակի ուսումնասիրություն և արդյունքների վերլուծություն	Ավտոմոբիլային ճանապարհների պահպանման և սպասարկման աշխատանքների հաջորդ տարվա պլանի ներկայացում		
2.2	Կատարված աշխատանքների ընդունման նպատակով ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող և առանձին պահպանման հանձնվող թունելների (3 հատ), կամուրջների (5 հատ), պարսպող համակարգերի (764325 գծ.մ) պահպանման և գծանշման աշխատանքների (495597.7 քառ.մ) պարբերական	Թունելների, կամուրջների և մետաղական արգելափակոցների պահպանման աշխատանքների ուսումնասիրություն	Պարբերական դաշտային այցելություններ	Թունելների, կամուրջների և պարսպող համակարգերի պատճառ սպասարկման ապահովում	31.12.2021	30,935,777

	դիտարկում և հսկողություն					
	Առանձին պահպանման հանձնվող թունելների, կամուրջների և պարսպող համակարգերի վիճակի գնահատում՝ հաջորդ տարվա պահպանման և սպասարկման պլանի կազմման նպատակով	Թունելների, կամուրջների և պարսպող համակարգերի գնահատում	Թունելների, կամուրջների և պարսպող համակարգերի վիճակի ուսմնասիրություն	Թունելների, կամուրջների և պարսպող համակարգերի պահպանման և սպասարկման աշխատանքների պլանի ներկայացում		
2.3	Ընդհանուր օգտագործման միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների միջին նորոգման աշխատանքների մշտադիտարկում և հսկողություն	Նորոգման աշխատանքների մշտադիտարկում և հսկողություն	Դաշտային պարբերական այցելություններ	Ընդհանուր օգտագործման միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների միջին նորոգման աշխատանքների պատշաճ իրականացման ապահովում	30.12.2021	28,725,815
3	ՀՀ պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների պետական կառավարման մարմնի և/կամ ճանապարհների վերականգնման, պահպանման	Ճանապարհաշինության ոլորտում օգտագործվող շինարարական նյութերի և պատրաստի արտադրանքի լաբորատոր	Շինարարական նյութերի և պատրաստի արտադրանքի որակական հատկանիշների որոշում և արդյունքների	Ճանապարհաշինության ոլորտում օգտագործվող շինարարական նյութերի և պատրաստի արտադրանքի լաբորատոր	30.12.2021	**29,968,000**

	պատասխանատու ստորաբաժանման առանձին հանձնարարականների դեպքում լաբորատոր փորձարկումների իրականացում	փորձարկումներ	տրամադրում	փորձարկումների ներկայացում լիազոր մարմնին		
Ընդամենը						***218,088,900***

Հ. ԲԱՍԻԿՅԱՆ

Ս. ՄԱՐՅԱՆ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

h/h 900011001121

ՀՎՀՀ 02815457

«Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ

ք. Երևան, Նալբանդյան փ. 28

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

h/h 900018007675

ՀՎՀՀ 02702598

Հավելված N2
2021 թ. _____ ____ -ին
կնքված N _____ պայմանագրի

Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի №2215-Ն որոշմամբ սահմանված 9.1 հավելվածի 9.1.8 աղյուսակի «1049» ծրագրի «11004» միջոցառման արդյունքի չափորոշիչները

Ծրագրի դասիչը	**Ծրագրի անվանումը**				
1049	*Ճանապարհային ցանցի բարելավում*				
Ծրագրի միջոցառումը					
Ծրագրի դասիչը՝	*1049*	Ցուցանիշներ			
Միջոցառման դասիչը՝	*11004*	Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
Միջոցառման անվանումը՝	*Ավտոմոբիլային ճանապարհների ցանցի հսկողություն, ուսումնասիրություններ և փորձաքննություններ*				
Նկարագրությունը՝	*Միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների, ինժեներական կառույցների նպատակային օգտագործման, պահպանման, տեխնիկական չափանիշների ստուգման և աշխատանքների արդյունքների ընդունման ծառայություններ*				
Միջոցառման տեսակը՝	*Ծառայությունների մատուցում*				
Միջոցառումն իրականացնողի անվանումը	*Մասնագիտացված կազմակերպություն*				

Արդյունքի չափորոշիչներ				
Երթևեկության ինտենսիվության չափումներ՝ Հաշվեկետեր, հատ	9	46	85	99
Երթևեկության ինտենսիվության չափումներ՝ Այցելություններ, հատ	5	54	105	122
ՀՀ պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների առանձին հատվածների գույքագրում, կիլոմետր	0	170	420	600
ՀՀ պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների առանձին հատվածների ծածկի միջազգային անհարթության ինդեքսի մշտադիտարկում, կիլոմետր	0	450	1100	1600
Ծածկի միջազգային անհարթության ինդեքսով մշտադիտարկված հատվածների կշիռը ընդհանուր ճանապարհային ցանցում, տոկոս	0	6	14.6	21.3
Միջոցառման վրա կատարվող ծախսը (հազար դրամ)	44,000.00	99,000.00	154,000.00	218,088.90

Հ. ԲԱՏԻԿՅԱՆ

Ա. ՄԱՀՅԱՆ

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն 3
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
h/h 900011001121
ՀՎՀՀ 02815457

«Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ
ք. Երևան, Նալբանդյան փ. 28
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
h/h 900018007675
ՀՎՀՀ 02702598